ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

2021թ. սեպտեմբերի 23-ից 25-ը ներառյալ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Վահե Հովհաննիսյանի և ՀՀ ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության պետ Արգամ Արամյանի Ռուսաստանի Դաշնություն կատարած գործուղման արդյունքների վերաբերյալ

1. **Անուն, ազգանունը՝**

   Վահե Հովհաննիսյան, Արգամ Արամյան

2. **Զբաղեցրած պաշտոնը՝**

   ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ, ՀՀ ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության պետ

3. **Գործուղման վայրը և ժամկետները՝**

   Քաղաք Մոսկվա, Ռուսաստանի Դաշնություն, 2021թ. սեպտեմբերի 23-ից 25-ը ներառյալ

4. **Հրավիրող կողմը՝**

   ՌԴ ֆինանսների նախարարություն

5. **Գործուղման նպատակը՝**

   Մասնակցություն՝ Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի (ԿԶԵՀ, Հիմնադրամ) 2022-2026 տարիների ռազմավարական նստաշրջանին

6. **Քննարկված թեմաները՝**

   ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալը և ՀՀ ֆինանսների նախարարության միջազգային համագործակցության վարչության պետը մասնակցել են Կայունացման և զարգացման եվրասիական հիմնադրամի 2022-2026 տարիների ռազմավարական նստաշրջանին:

   ԿԶԵՀ ռազմավարական նստաշրջանի ընթացքում Հիմնադրամի գործընկերների կողմից ներկայացվել են ԿԶԵՀ գործունեության առաջնահերթ և հիմնական ռազմավարական

ուղղությունները, քննարկվել են համընդհանուր խնդիրներն ու ռիսկերը, ինչպես նաև Հիմնադրամի բաժնետեր հանդիսացող անդամ երկրների ընդհանուր մոտեցումները Ռազմավարության շրջանակներում ներառվելիք ուղղությունների վերաբերյալ: Նստաշրջանի շրջանակներում անդրադարձ է կատարվել նաև ԿԶԵՀ ռազմավարական պլանավորման հարցերին, Ռազմավարության իրականացման ռեսուրսներին առնչվող ասպեկտներին, ԿԶԵՀ-ի գործառույթների ապահովման նպատակով ֆինանսական միջոցների ընդլայնման հարցերին: Կայացել է մտքերի փոխանակում Հիմնադրամի, կայունացման մեխանիզմի կատարելագործման ու Հիմնադրամի զարգացման գործառութային բաղադրիչի տեսլականի վերաբերյալ, ինչպես նաև այն գործիքների և դրանց կիրառման առկա մեխանիզմների բարելավման վերաբերյալ, որոնց միջոցով Հիմնադրամը ցուցաբերում է աջակցություն և կշարունակի ցուցաբերել անդամ երկրներին:

7. Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը

Մոսկվա կատարած այցի շրջանակներում ԿԶԵՀ 2022-2026 տարիների ռազմավարական ծրագրի քննարկան սահմաններում ելույթով հանդես է եկել ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Վահե Հովհաննիսյանը: Ելույթի ընթացքում, ի թիվս այլ հարցերի, կարևորվել է Հիմնադրամի հետ համագործակցության շրջանակներում Հայաստանի և Հիմնադրամի միջև 2022-2024թթ. Ռազմավարությունը, շեշտվել է Հիմնադրամի ընդհանուր Ռազմավարության և երկրային Ռազմավարությունների միջև ներդաշնակության կարևորությունը:

Հանդիպման շրջանակներում՝ քննարկումների համատեքստում, ԿԶԵՀ-ի հիմնական առաքելություններից մեկի՝ անդամ երկրների զարգացմանն աջակցելու հետ կապված նշվեց, որ ներկայումս աճել է անդամ պետությունների պարտքային ծանրաբեռնվածությունը, իսկ այդ պարագայում դժվարանում է զարգացման ծրագրերի իրականացումն ու Հիմնադրամի այդ առաքելության ապահովումը:

Կայունացման գործառույթի վերաբերյալ նշվեց, որ այն պետք է գործի մինչև ճգնաժամերի հաստատումը, և խնդիր կա հակաճգնաժամային ծրագրերի առկայության, դրանց կիրառման մեխանիզմների բարելավման առումով, վաղ կանխարգելման միջոցառումների տեսանկյունից:

Փոխնախարար Վ.Հովհաննիսյանի կողմից առաջարկ հնչեցվեց Ռազմավարության տրամաբանությունը կազմելիս հիմնական շեշտը դնել ոչ միայն գործիքների և միջոցառումների վրա, այլ առավել կարևորել նպատակը, որը Ռազմավարության մեջ պատշաճ կերպով ներկայացված չէ: Նաև միջազգային կառույցների հետ համագործակցության համատեքստում նշվեց, որ անդամ երկրների այս կամ այն խնդրի հանդեպ կառույցի ներսում հաճախ ընկալում է ձևավորվում, թե տվյալ խնդիրը պատկանում է առանձին պետություններին, մինչդեռ այդ խնդիրները պետք է լինեն կառույցների համընդհանուր մտահոգության առարկա, և դրանց լուծման ուղղությամբ համատեղ ջանքեր պետք է գործադրվեն: Միաժամանակ միջազգային կառույցները պետք է առավել շատ ուշադրություն դարձնեն համագործակցության արդյունավետ մեխանիզմների ներդրմանն ու վերջիններիս առկայությանը:

Ընդհանուր հավանության արժանացավ նաև «Թվայնացումը»՝ որպես առանձին ուղղություն Ռազմավարության մեջ ներգրավելու մոտեցումը:

Վ.Հովհաննիսյանի կողմից նաև նշվեց, որ Ռազմավարության նպատակների իմաստով հատկանշական է այն, որ բոլոր աշխատանքները միտված են քաղաքացիների կյանքի որակի բարելավմանը, և այդ կապը պետք է արտահայտվի Ռազմավարության մեջ:

Կարևորվեց նաև Ռազմավարության շրջանակում սոցիալական ոլորտի նշանակությունը և նշվեց, որ Ռազմավարության մեջ վերջինիս արտահայտումը պետք է առավել հստակ լինի:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը

Հիմնադրամի կողմից անդրադարձ կատարվեց Ռազմավարության վերանայման և դրա պարբերականությանն առնչվող հարցերին: Արձանագրվեց, որ ամենամյա վերանայում հնարավոր չէ նախատեսել, սակայն անհրաժեշտ է հաշվի առնել տնտեսական իրավիճակի գլոբալ փոփոխությունները, որոնցով պայմանավորված անհրաժեշտ կլինի վերանայումներ նախաձեռնել: Այդ իմաստով նաև իրավիճակների չնախատեսված, կտրուկ փոփոխությունների համար ֆինանսների նախարարությունների, Հիմնադրամի և Եվրասիական զարգացման բանկի միջև արագ շփումների և արձագանքման մեխանիզմներ պետք է նախատեսվեն:

Պայմանավորվածություն ձեռք բերվեց ֆինանսական ռեսուրսների ներգրավման և այլ ծախսերի ընդլայնման իմաստով Հիմնադրամի կողմից ֆինանսական գնահատականներ կներկայացվեն բաժնետերերին, որոնց կհետևեն համապատասխան քննարկումներ և նոր որոշումներ կկայացվեն: Հիմնադրամի կողմից հաշվի կառնվի վերոնշյալ առաջարկությունը և կտրամադրվի մանրամասն տեղեկատվություն ֆինանսական ռեսուրսների ներգրավման հիմնավորումների և տեղեկատվություն կադրային ռեսուրսների մասով, թե տարեկան քանի հաստիքի ավելացման անհրաժեշտություն կլինի, որոնք կլինեն նրանց զբաղվածության ոլորտները:

Հիմնադրամի կողմից առաջարկվեց ստորագրել արձանագրություն՝ քննարկման արդյունքների վերաբերյալ, մասնավորապես՝ ռազմավարական հիմնական ուղղությունների հաստատման, սակայն անդամ երկրների կողմից նշվեց, որ Ռազմավարության կոնցեպտի մասով, ընդհանուր առմամբ, համաձայնություն կա, սակայն ֆինանսավորման ընդլայնման և գնահատականների մասով հստակեցումներից հետո պետք է քննարկումներ իրականացվեն վերջնական որոշում կայացնելու համար:

Նստաշրջանի ավարտին Վ.Հովհաննիսյանի կողմից առաջարկվել է Հիմնադրամի շրջանակներում հաջորդ նմանատիպ հանդիպումը կազմակերպել Երևանում, ինչն ուրախությամբ ընդունվեց մասնակիցների կողմից:

ՌԴ ֆինանսների նախարարության ներկայացուցիչների հետ քննարկվեցին ՌԴ ՖՆ Գիտահետազոտական ֆինանսական ինստիտուտի հետ ընթացիկ համագործակցության հետագա ընդլայնման, մասնավորապես երկու կողմերից այլ գերատեսչությունների ներգրավվածության վերաբերյալ հարցեր: Անդրադարձ կատարվեց տարբեր միջազգային ֆինանսական կառույցների մասնավորապես Հիմնադրամի, Եվրասիական զարգացման բանկի շրջանակներում փոխգործակցության ակտիվացմանն առնչվող հարցերին: Պայմանավորվածություն է ձեռք բերվել ստորաբաժանումների մակարդակում շփումների հետագա խորացման վերաբերյալ:

9. Ստորագրությունը, ամսաթիվը

28.09.2021թ.